

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԱԼԸ ԹՐԱԿԻԱՅՈՒՄ

յուախային Հունաստանի և մասնավորապես Թրակիայի հույների մոտ մատաղի սովորությունը յուրահատովէ և հետաքրքրական: Մատաղի սովորությունը օտար է դասական: Հունաստանի կուապաշտական ժիսական սովորություններին, ինչպես և քրիստոնյա Հունաստանի ավանդություններին: Շատ հավանաբար օտարամուս այդ սովորությունը հույները վերցրել են հայեցից:

Սույն հոդվածով այդ հարցը քննության ենք առնելու:

Արյունոտ գոհի կամ պատարագի սովորությունը համարյա գոյություն չի ունեցել քրիստոնյա Հունաստանում, բացի Զատկի գունազենումից: Իսկ շինությունների հիմնարկության առթիվ մորթվող գառնուկը կամ աքլորը սնոտիապաշտական հավատի այսինքն ոգիներից շենքը ամուր դարձնելու խնդրանքի և մաղթանքի՝ սովորության շարունակությունն է: Սա ո՞չ մը նմանության եղու շունի մատաղի այն սովորության հետ, որ նոր Հունաստանի որոշ շրջանում գործադրությունը է:

Թրակիայի հյուսիս-արևելյան շրջաններում, հունական և բուղարական գյուղերում<sup>1</sup> հասարակաց մատաղներ են անում զվարակեներով: Փոքր Հեմու լեռան արևելյան կողմերը գոյություն ունի բյուզանդական շրջանից Այիսու Խլիասի (Ս. Եղիայի) վանքը, ուր ամեն տարի հուկիսի 20-ին, այդ սրբի տոնին, մատաղ են անում գյուղացիները: Ս. Եղիա Մարգարեի տոնին զենում են զվարակներ, գյուղի կամ ավանի բնակչության թվի համեմատությամբ:

<sup>1</sup> Ֆիլիպե, Գավարը, Ալիվասի, Դավուտը, Ռաման, Ռավդա, Գշագերե, Էվստամոսորի, Նեմոնա, Սինաբը, Չուբուրյոյ, Ասրոր, Մեծ և Փոքր Մաստաբըներ, Պանա և ալին:

Բայտ կանոնի՝ մատաղացու զվարակը պետք է լինի 2—5 տարեկան, սպիտակ, բացարձակապես առողջ և լծի չկապված:

Մատաղացուն բերում կապում են գլուղի հրապարակում, մի տարեց ծառից: Քահանան օրինում է մատաղացուն և մի ամանի մեջ դրված աղը: Մատաղացու կենդանու եղջյուղների վրա զիտեղում են վառված մոմեր, զարդարում են կարմիր շղարզով կամ ժապավեններով: Մի խեցու վրա վառում են խունկ և խնկարկում անասունին: Ետու մոտ փորում են մի փոս: Ամուր կապում են մատաղացու կենդանու ոտները, պանկեցնում են փոսի մոտ, աջ կողի վրա և գլուղը արեվիլք դարձրած: Մորթողը, որը անպայման պետք է աշխարհական լինի, ձեռքի դանակով խաչակնքում է մատաղացու անասունի կոկորդին ու կատարում զենումը: Զոհի արյունը հոսում է փոսի մեջ:

Այդ արյունով խաչակնքում են ներկա գտնվող մանուկների ճակատները, որպեսզի շիխվանդանան և առողջ լինեն:

Գյուղացիների մեջ կա այն հավատը, որ հիվանդություններից պաշտպանվելու համար, անպայման պետք է զվարակ զենուկ Այիսու Խլիասի տոնին:

Զվարակի մորթը աճուրդի են դնում և նրանով վճարում մատաղացուի արժեքը: Մսի մի մասը բաժանում են աճուրդի մասնակիցներին, իսկ մնացած մասը եփում են ձավարով կամ բրնձով և ուսում ծառի տակ, բոլոր գյուղացիների մասնակցությամբ, փարշով գինի են խմում, մի քիչ էլ թափելով գետինը և մաղթում՝ մատաղը օգնական»: Մեծ Մանաստըռում տանուտերը ինքն է կատարում մատաղացուի օրհնությունը: Վառում է մոմը, խաչակնքում է մատաղացուի գիտին, մեջքին ու ագիին և հետո մորթում: Արյունովը խաչակնքում է տան չորս պատերը:

Մատաղի շարժառիթն ու զվարակի զենման նպատակն է արգասարերության և ա-

ոռջուրյան մաղթանքը և ճահճալին հիվանդություններից զերծ մնալու բաղձանքը: Մատաղը մատուցվում է առասարարկ բարձր վայրերում, լեռների վրա կանգնած վանքերի շրջակայքում, ծառերի տակ և մասնավորապես Այիսո հյասի տոնին: Սա այն սուրբն է, որ փոխանորդել է հեթանոսական արկի աստվածության և ընդունվել է որպես ամեն տեսակի հիվանդությունների բուժող և առատության ու արգասավորության աղբյուրը:<sup>2</sup>

Եղան պաշտամունքը հնուց գոյություն է ունեցել շատ ժողովուրդների կրոնական հավատակիքների մեջ: Սակայն մեր նպատակն է՝ ցիր կամ եղան պաշտամունքից ավելի, խոսել եզր իրբ զոհ մատուցելու սովորության մասին:

Նախնի հուները եզր զոհում էին իր բուսականության ներկայացուցիչը: Հուների մոտ աչդ սովորությունը ծանոթ է բուփոնքա (եղան զենում) անոնով: Եղան զենոնան արարողությունը տեղի էր ունենամ հունիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, երբ Ատտիկեում վերջացած էր լինում կամ նումը:

Զվարակ զոհելու սովորությունը կար նաև հրեաների մոտ: Կար նաև զոհի արյունը սրսկելու և մի փոսի մեջ թափելու հրահանգը: Սակայն, երբ Թրակիայում օրհնվում է անասունը, զենվում է աշխարհականի կողմից, մատաղ է լինում, մատաղի ճաշակմանը մասնակցում է ամբողջ համայնքը, հրեաների մոտ զոհր զենվում, ողջակիզվում և այրվում էր հանճանալի ձեռքով: Հուները մի բարիք էին սպասում զոհի արյունից, և որով խաշակնում էին տան պիտակոր մասերը, երեխաների ճակատները, մինչ հրեաների մոտ՝ արյան շնորհքը մասնավորվել է տանարին և վերագուրին սրբութեանք:<sup>3</sup>

Թրակիայի հուները զվարակ զոհելու սովորությունը երրաւեցիներից փոխ չեն առել, եթե այդպես եղած լիներ, պետք էր, որ այդ սովորությունը սարածված լիներ քրիստոնյա հուն ժողովրդի մեջ, ընդհանրապես, հետեւարար և Հունաստանի ամեն կողմը: Մինչդեռ մատաղի սովորության հանդիպում ենք միայն Թրակիայի շրջանում:

Միթրայականների մոտ էլ սովորությունը կար զվարակ կամ ցուզ զենուկ, ի պատիվ Միթրայի: Միթրայականության անբաժան մասն էր զոհի, մատաղի սովորությունը, ու-

<sup>2</sup> Վերոգրյալ ազգագրական ծանոթությունների համար մեզ գլխավոր աղբյուր է ծառայել հունական ազգագրական ընկերության օրդան „Առօրագույն” հանդեսի Գ հատուցը:

<sup>3</sup> Խորայի մոտ զոհարերության պայմաններն ու տեսակները մանրամասնորեն տրված են «Գիրք Դետացոց», Ա-Զ գլուխներում:

րովհետև նրանք հավատում էին, որ աշխարհի խաղաղությունն ու առատությունը ծագում էր զանի արյունից: Բոլոր միթրայական մեհյանները ունեն մի պատկեր, որը ներկայացնում է Միթրային փողոտելիս մի ցուզ, որի կողից առատորեն հոսում է արյունը, և որից ծլում է նոր կյանքը: Միթրայական նորահավատը մկրտվում էր զոհվող զվարակի արյունով և վերստին ծնվում»:

Միթրայի զոհարերությունը ներկայացնող քանդակների վրա մատաղացուն դարձել է դիպի արևելք: Երկու զահակիրներ կանգնել են, մին առաջ և մյուսը հետ:

Միթրայական կրոնի հատուկ զոհման արարողությունը ներկայացնող քանդակներում կամ նկարներում Միթրայի դաշտուահարած ցլերից ոմանց պոշը վերջանում է ցորենի երեք հասկերով, իսկ քանդակներից ոմանց վրա էլ, դանակի խրված տեղից ցայտող արյան փոխարեն, ցորենի հասկեր են դուրս ելնում: Զոհվող ցուզը խորհրդանշում էր ցորենը, առատությունը, պտղաբերությունը:

Միթրայականությունը հուների մոտ հող չէր գտել, ոչ պարսիկների կարճատև տիրապետության ժամանակ (Ե դ. մ.թ.ա.), ոչ էլ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, հուն-պարսկական փոխարաբերությունների առավել երկարատև գոյությունը:

Հուպիանոս Ուրացող կայսեր (331—363 թ. թ.) Միթրայականությունը Բյուզանդիայում մուծելու փորձերը ապարդյում անցանձ, որովհետև Հելլագայի համար մի «բարբարոս» աստվածություն էր Միթրան:

Արդ, հարց է, թե ե՞րբ և ի՞նչպես Թրակիա է մտել մատաղի սովորությունը:

Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ մատաղի սովորությունը Թրակիա է մտել բյուզանդական ժամանակաշրջանում Թրակիա բռնագաղթեցված և հաստատված հայերի միջոցով:<sup>4</sup>

<sup>4</sup> Կարելոր և նկատառելի պարագա է նաև այն, որ միթրայականության մեջ մատաղացու զվարակի ճակատը կապում էրն մի պարու և եղջյուրներից կախում էրն ծաղկեպակներ, երբեմն էլ ուկեզօծված և բրդյա երկաներով էրն զարդարում (տե՛ս Marquart, „Le culte chez les romains”, vol. I, էջ 216: —Ch. Daremberg, «Dictionnaire des antiquités grecques et romaines», Taurobolium & Sacrificium հոդվածները).

<sup>5</sup> Միթրայականության և քրիստոնեության վրա ունեցած գերի և աղեցության շուրջ հանձնարարելի է Arthur Weigall-ի «The Paganism in our Christianity (Hutchinson)» անուն գերբեր:

Թեոդոսիոս Փոքր կայսեր օրով (408—450  
թ. թ.) բյուզանդական կայրության արևել-  
յան սահմանների վրա, ինչպես և Կոստանդ-  
նոպոլսում, հայեր էին հաստատվել<sup>6</sup>:

Մորիկ կայսրը բազմաթիվ հայեր գաղթեց-  
րել և տեղավորել էր Թրակիայում<sup>7</sup>:

Կոստանդին Կոպրոնիմոսի օրով (741—  
755 թ.թ.) նույնպես հանդիպում ենք հայե-  
րի զանգվածային բռնագաղթին՝ դեպի Թրա-  
կիա:

Աննա Կորնելինեն, իր «Ալեքսիական»-ում  
գրում է, որ Հովհաննես Զմշկիկ կայսրը  
(969—976 թ.թ.) պավիլյաններ էր գաղ-  
թեցրել Թրակիա<sup>8</sup>:

Հունաստանում մատաղի ծանոթ սովորու-  
թյան հանդիպում ենք բյուզանդական կայս-  
րության օրով և զանազան այլ առիթներով  
գաղթեցված հայերից բնակեցված վայրե-  
րում, հատկապես Թրակիայում:

Արդ, հայերը ունեին մատաղի սովորու-  
թյունը: Ի՞նչ էր նրանց ըմբռնումը եզան և  
զվարակի և առհասարակ մատաղի մասին:

Շատ հին ժամանակներից հայ հողագործ  
և անասնապահ ժողովրդի կրոնական հա-  
վատալիքների մեջ եղել է եզան պաշտա-  
մունքը:

Սովորություն էր զոհեր մատուցել հաղթա-  
նակների առիթիվ, ինչպես Տրդատ Գ-ի հայ-  
րը Խոսրով, որը իբր երախտագիտություն-  
պարսիկների դեմ իր տարած հաղթությա-  
նը, «սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք,  
սպիտակ ձիովք և սպիտակ չորովք...» զհայ-  
րենեացն պաշտամանց տեղին մեծարէք<sup>9</sup>:

Հաղթանակների առիթիվ ցուզ զոհեր սո-  
վորությանը մենք հանդիպում ենք նաև  
պատկերամարտ հույն պայալը Նիկեփորի  
ժամանակ, ինչպես վկայում է ժամանակա-  
դիր Թեոֆանը<sup>10</sup>: Նա գրում է, որ Նիկեփոր  
կայսրը, Վարդ Պատրիկի ապստամբության  
ժամանակ, նրան հաղթելու համար, մի ցուզ  
զոհեց և ընկալլալ ծեսերը կատարել տվեց:  
Նա հաղթեց և այդ հաղթանակը վերագրվեց  
զոհաբերության: Սա փաստ է, որ Հույների  
մոտ գորություն շուներ նման զոհաբերություն  
և Թեոֆանը այդ հիշում է՝ պարսակելու հա-  
մար Նիկեփոր կայսրին:

Եզնիկ Կողբացին վկայում է, որ հայերը  
Հավատում էին սրբազն եզների, որոնք  
ոչնչացնում են վիշապներին և մարդկանց  
ազատում շար ոգիներից: Հայ հեթանոս հա-

<sup>6</sup> N. Բագրենյան, «Թրակիա», Հատ. I, էջ 318—329:

<sup>7</sup> «Պատմութիւն Սեբաստի եպիսկոպոսի ի Հերակլն», թիվիւն, 1912, Գ. Ը., էջ 82, գ. հ., էջ 112:

<sup>8</sup> Աննա Կորնելին, «Ալեքսիական», Բոնն, 1873,  
Հատ XIV, էջ 8:

<sup>9</sup> Ազարանեղոս, Տիգիս, 1909, էջ 22 և 34:

<sup>10</sup> Bonne, 1839, T. I, 759.

վատալիքների մեջ կարևոր տեղ էր գրավում  
եղը: Եղը եղել է խորհրդանիշը արքասավ-  
րույան, ինչի անպակասուրյանն և զանա-  
զան հիվանդություններից ազատվելու Արդ  
սպիտակ եզների կամ գոմեզներից մազերից  
տանում էին և գցում իրենց ամբարները, որ-  
պեսդեռ անսպառ լինի ալյուրը. այդ մազերը  
պահում էին իրենց վրա, բուժվելու համար  
տենդից և այլ հիվանդություններից<sup>12</sup>: Հա-  
յատանի մի քանի հինավուրց վանքերում  
պահում էին հատուկ եզներ, որոնք սուրբ  
էին ծողովրդի աշքում: Մշո Առաքելոց վան-  
քում պահում էր մի եղ, Վանի մի շարք  
վանքերում, ինչպես Խաթուն Տիրամոր վան-  
քում պահում էին սպիտակ խալ (Տիրամոր  
նշան) ունեցող եզներ<sup>13</sup>:

Սնի քաղաքի 1218 թվականի մի արձանա-  
դրությունը հիշում է, թե Անիի բնակիլ-  
ները պարտավոր էին ամեն տարի Զատկին  
վիարակի մորթին մատուցել եպիսկոպոսին<sup>14</sup>,  
Մրանից կարելի է եղրակացնել, որ սովորու-  
թյուն ունեին ամեն տարի զվարակ զոհելու  
և մորթին էլ կղերականին նվիրելու:

Մատաղի մորթին քահանային նվիրելու  
սովորությունը մնացել է մինչև Ծնորհալու  
ժամանակները, որը հրահանգում է. «...Ի  
զենեալս անտի օրինագրեաց տալ հաւա-  
տացելոց քրմացն մասունս, ոչ միայն զոր  
այժմս տան երի և մորթի<sup>15</sup>: Իսկ մատաղից  
ակնկալած օգնության հավատի շարունակու-  
թյան փաստ է Ծնորհալու այն խոսքը, որ  
ասում է. «քանչի անսանոցն զենմոնք ոչ այլ  
ինչ առանձինութիւն ունին օգնութիւն... ի  
պտղոց և ի սերմանեաց, այնպէս և յանա-  
սուն կենդանեաց...»<sup>16</sup>:

Գարեգին վարդապետ Արվանձոյանցը  
«Մանանա»-յում հիշատակելով Վանի բնակ-  
շության սովորությունների մասին, ասում  
է, թե երաշտի կամ այլ բնական պատու-  
հասի պարագայում սովորություն ունեն  
մատաղ անելու Որպեսզի մատաղը ավելի  
հանդիսավոր լինի, թաղի հասարակությունը

<sup>11</sup> Խ. Սամվելյան, «Հին Հայաստանի կուլտուրան»,  
Հատ. Ա, էջ 176—183:

<sup>12</sup> «Ազգագրական հանդէս», XXV (1918), էջ  
45—46:

<sup>13</sup> Նույն տեղում, XXIII (1911), էջ 123, XXVI  
(1916), էջ 210: Կարենի վարդապետ Մրվանձ-  
այանց, «Մանանա», էջ 119: Տե՛ս և Հ. Զ. Անկյան,  
«Գնումայաց և Առերունի վանքերը», «Հանդէս ամ-  
սոբեայ», 1940, էջ 192—213:

<sup>14</sup> Գրիգոր Տարեացի, «Գիրք Հարցմանց», Կոս-  
տանդնուպոլիս, էջ 397: Տե՛ս և Զավախչշվիլիի,  
«Եյութեր սոցիալական շարժումների պատմու-  
թյան համար» (Հայերներ թրգմ.), Ե., 1937, էջ 85:

<sup>15</sup> Ներսես Շնորհալի, «Քուղաց ընդհանրական», էջ-  
մրածին, 1865, էջ 352—362:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 364:

մասնակցում է ծախսին: Որոշ ժամանակ՝ նրանք լավ կերպում են կովը կամ ցովը, որպեսզի պարարտանա: Որոշակ օրը մեծ բազմությամբ անասունը տանում են այդի դաշտ: Քահանան օրհնում է աղո: Մատաղցուի հջոյուրները զարդարում են վառված մոմերով: Կան նաև վայրեր, որոնք շատ են գցում: մատաղցուի վրա<sup>17</sup> և իրենք էլ ձեռքերը մոմերով թափոր են կամում: Մատաղցուի մորթին իսկ նվիրական է. այն նվիրում են եկեղեցում կամ վանքին:

Զանգեղողի գավառի Տաթևի վանքի հանդիպակաց լեռան վրա գտնվում է «Եղանական գիրք» (Օլյուզ վիարա): Քարի ահագին մի կույտ է սա, որի մասին ավանդությունն ասում է, որ այսուել է թաղվուլ մի մեծ եղ, որը քարեր է կրել Տաթևի եկեղեցու շինության ժամանակ: Երբ կենդանիների մեջ պատահում են տարափոխուրդ հիվանդություններ, երեք անգամ պատեցնում են հիվանդ անասուններին այդ քարակույտի շուրջը, իսկ եթե կարելի լիներ տանել անասունը, քարակույտի տակից առնում են մի ափ հող, խառնում են աղով և կերցնում հիվանդ անասունին<sup>18</sup>:

Բորշալուկի շրջանում և Հայկական շատ գավառներում հարսանեկան սովորությունների կարգում, կատարվում էր նաև հարսանիքի հղում մորթելու ծեսը: Երբ մորթում էին եզր, ավագագույն ամուսնացյալը կամ թագավորի (փեսի) մայրը, առաջին ցայտող արյունի մեջ թաթախում էր կարմիր թելի մրկոր և խնամքով պահում մինչև նորապահ ամոլի առաջաստ մտնելու գիշերը, որպեսզի փեսան չկորցնի իր առանկան զորությունը— «Թագավորը կապ լընկնի»: Թագավորի (փեսի) ճակատը խաչակինքում էին այդ արյունով որպեսզի զերծ մնա փորձանքներից<sup>19</sup>:

Հարսանիքի ուրբաթ առավոտյան փեսացուի հայրը մի եղ է բերել տալիս, կապում են ոտները, պականեցնում են երեսը դեպի արևելք դարձրած: Մասգործը դանակով խաչէ քաշում եղան կոկորդը և մորթում: Փեսացուի մայրը թաթախում է ձեռը եղան արյան մեջ և խաչաձև քսում տան դրան ճակատը, որպեսզի աշք շդիպի օշախին<sup>20</sup>:

17 Շաբառառակիր քահանան միջնորդ է նկատված՝ Աստուծու և մարդկանց միջև Մատաղցուի վրա շորշակը խոր իմաստն էլ զոհացում միջնորդ նկատելու հավատքն է անտարակույտ Տե՛ս մեր հոգվածը՝ «Թօղին խորհուրդն», «Հայաստանի կոչնակ», 1939, հոկտ. 2, № 42, էջ 1147—1149:

18 «Ազգագրական հանդէս», III, (1898), էջ 215:

19 Նույն տեղում, IX, (1902), էջ 227, XV (1907), էջ 18, IV (1898), էջ 75:

20 «Ազգագրական հանդէս», XVI (1907), էջ 18 (նոր թայզետ), XII, էջ 124:

Վաղարշապատում սովորություն էր Համբարձման տոնին մի եղ զարդարել, կանաչներով ու ծաղիկներով և ժողովրդական թափորվ պատեցնել գյուղում: Դա «Համբարձման եղ» էր, որի մեջ գտաղացին տեսնում էր բուսական, կենդանական և մարդկային արգասավորությունը<sup>21</sup>:

Գրիգոր Թաթևացին իր «Գիրք Հարմանց»-ում (էջ 383) հարցնում է. «Եթէ արին ցլուցն և նոխազանց... սրբէր զպղծեալսն, քանի՞ առաւել արիմն Յիսուսի»: Նշանակում է հավատում էին ցլի արյան սրբելու, սրբացնելու հատկությանը: Դարձյալ «զուարակն հզօր և արդիմաւոր, զի արդիմարարք և հզօրացեալք ի փործս բարիս՝ պատարագ և Աստուծոյ» (էջ 358):

Ճանապարհորդ էլիզե Ռեկլում գրում է. «Մեծ տոներին Հայերը ցուզ և խոյ են բերում եկեղեցին կամ նվիրական ծառերին, պասկում են նրանց ծաղիկներով ու վառված մոմերով զարդարում: Հետո մորթում են այդ կենդանիներին, երգելով ու աղոթելով: Այս ակներն Միհր աստծու զոհն է, որ հին կրոնքը կտակել է նորին<sup>22</sup>:

Հայերի մոտ էլ մատաղցուամ միշտ արու պետք է լիներ, սպիտակ, բնուիր տեսակից, անարատ, արդար վաստակի արդյունք: Զենոպոր լինելու էր տղամարդ, աշխարհական և հավատացյալ<sup>23</sup>:

Գրիգոր Լուավորիչ «Հրամայեաց ժողովրդեանն զի փոխանակ մեռելուի կողոն նուիրաց զոր մատուցանէին յառաջագոյն, նուիրացեան միոյն Աստուծոյ նուէրս յանրանից կենդանեաց օրհնութեան աղիւ խառնելով<sup>24</sup>:

«Ժողովիսցին քահանայքն ի միասին ի դուռն եկեղեցայն... ընդ նոսին և տէր պատարագին և դիցեն զալն առաջի սրբոյ խաշըն և երգեսցեն... ընթերցցեն... և յեշեցեն... և տացեն զալն օրհնեալ, և զինցեն զանասունն...»<sup>25</sup>:

21 Նույն տեղում, IV, էջ 112: Տե՛ս և «Հանդէս ամսօրեալ», 1912, հունվար, էջ 11—12, Աստրիափ Ռոդվածը: Տե՛ս նաև «Ազգագրական հանդէս», Ա. (1895), էջ 249, թ, էջ 129, Գ, էջ 331—332, Զ, էջ 252, է—Ը (1901), էջ 156, թ, էջ 222, ԺԲ, էջ 124, ԺԳ (1) էջ 152, Ի, էջ 155:

22 Էլիզե Ռեկլու, «Ռուական Հայաստան», թրգմ. Միաբանի, Վաղարշապատ, 1891, էջ 50—51:

23 Գրիգոր Տաթևացի, «Գիրք Հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 365:

24 Նուրբալի, «Թուղթ ընդհանրական», էջ 352—353: Գրիգոր Տաթևացի, «Գիրք Հարցմանց» էջ 359:

25 «Թուղթ ընդհանրական», էջ 363—364:

Օրհնության վերջավորությունն էր՝ «և պրոգրամմաց զթողովիմ մեղաց, աճեցո զհաւատս և զանդեայս և զամենայն ինչս և ստացուածս ծառայից քոց» և այլն; Ծնորհալին ասում է. «իսկ... զոր տեառնական կոշեն... կարդացեն զգինալն օրհնությունսն ի վերա աղին քահանայք, և տացեն անասոյն և զենցենա<sup>26</sup>, «...և սահմանեցին առաջին հարք մեր նախ օրհնեալ աղ տալ նուիրեալն անասոյն, ապա զենովզ<sup>27</sup>։

Անասունը պետք է լիներ կենդանի և ոչ թե մեռած, մորթելիս պետք էր որ դուրս գար արյունն ու շոնչը և բնական չերժությունը, որ էր կենդանությունը<sup>28</sup>; Զենքը պետք էր լիներ երկարից և հատու<sup>29</sup>; Զենումը պետք էր կատարվեր անասունը դեպի արևելք դարձած<sup>30</sup>; Անասունի գոլփաը պետք էր անջատվեր մարմնից<sup>31</sup>։

Խոստացյալին բերում են «ի դուն եկեղեցոյ», որ է գավիթը. անասունի վրա դնում են «վարմիր [նարոտ] և բամբակ» և ծածկում են «վարմիր հանդերձիմ»։ Իսկ Ծնորհալին ասում է. «Վարմիր արկանելով ծածկել անասուն» և «յեղշիրսն նարօտ» կատել<sup>32</sup>։

Զոհացուները զարդարում էին, հղյուրներին կապում էին «վարմիր» և սպիտակ բուրդա։ Եղջյուրներից կախում էին «միւրզ զանգանա» (անշոշա խորհրդանշելով մայր երկրի բարեբերությունը) և «Եղջյուրների միջև զետեղում էին մոմեղլեններ»։

Սյու ծեսը «ըստ հոյն օրինի» էր, ինչպես ասում է Ծնորհալին, երբ դիտել է տալիս՝ «և զայլմ զորս ի տգէտ քահանայից եղեալ է ի ցուցակին, կարմիր արկանելով ծածկել զանասունն և յեղշիրսն նարօտ ըստ հոյն օրինի, ամենակին մի առներ զի աւելորդ է, անօգուտ և պատճառ գայթակղութեան»<sup>33</sup>։

Հեթանոս հայր, կենդանու արյունը խմելով, «Պաշինք էր կնքում», «ազգականական կապ էր հաստատում» իր պաշտած կամ նվիրական նկատած անասունի հետ։ Մըանից հայրի միջ մնացել է մատաղացոփ արյունը խմելու և կամ տան սեմին, սյուներին, պատերին քելու սովորությունը։

26 «Գիրք հարցմանց», էջ 366:—«Թուղթ ընդհանրա-կան», էջ 363:

27 «Գիրք հարցմանց», էջ 657:—«Թուղթ ընդհանրա-կան», էջ 365:

28 «Գիրք հարցմանց», էջ 395:

29 Նուզն անդում, էջ 365:

30 Նուզն անդում, էջ 366:

31 Նուզն անդում, էջ 365:

32 «Թուղթ ընդհանրական», էջ 363:

33 «Գիրք հարցմանց», էջ 369:

Սյու սովորության է ակնարկում Միսիթար Գոշը, երբ գրում է, որ աղվեսը մատաղի զենման ժամանակ ոզարիմն ևս լիզուրու: Եվ երբ մեղադուռն էին, պատասխանում էր. «Նուիրեալ է և այդպես արժան է առնելը<sup>34</sup>։

Հեթանոսական այս սովորությունը արգելվել է Ծնորհալին. «Մի՛ ոք իշխեսցէ զսեամ, գրան օծանել արեամբ քափինն որպէս ասեն զտիտաց ոմանց թէ առնեն, զի այն հրէական է և որ այնպէս առնէ ընդ անիծիւք է», կամ՝ «Մի՛ ոք տփիտարար զարիմն գառինն ժողովնեցէ, կամ կերիցէ, որպէս լսեմք, թէ առնեն տիմար մարդիկց<sup>35</sup>։

Զոհի արյունը խմելու հեթանոսական սովորությունը շատ հին է. այդ մասին վկայում է Ազգաթանգելուուր, «...քանզի ուստիին և ըմպէին մարդիկ զարիմն զոհից անասուոց դիցապաշտութեան...»<sup>36</sup>:

Հայկական մատաղի և Թրակիայի հույների մատաղի սովորությունների անհերքելի նմանությունն ու նշանակությունը մեզ բերում են այն համոզման, որ Ալիս Իլիասի (Իլիոս—Սրբակ) տոնին, Հյուսիսային Հունաստանում և մանավանդ Թրակիայում միայն հատարավող զվարակի մատաղի սովորությունը և նրա հավատը մնացել է՝ բյուզանդական ժամանակաշրջանում բոնագաղթեցման կամ այլ ձեերով այդ շրջանում հաստատված մեր աղքակիցներից։ Գաղթեցված հայերը, որոնք առհասարակ աղանդավորներ են եղել, իրենց մեջ վաս են պահել արևի պաշտամունքը և իրենց տարագրության շրջանում իսկ ամուր կապված են մնացել իրենց սովորություններին։

«Այդ պավիկյաններից մինչև օրս էլ գոյություն ունեն Ֆիլիպեի և մասնավորապես Սլիվենի շրջանում, իսկ հազարավորներ Աւելիսիոս Ա.-ի (1081—1118 թ. թ.) և հետագա հալածանքներից ազատվելու համար ապաստանել են Հեմոս լիուան (Բալիկան) անձատչելի հովիտներում, ուր դեռ ապրում են աշխարհից հետո... բայց պահելով իրենց հավատալիքները և նրա մաս կազմող արյուն մատաղը»<sup>37</sup>:

34 Միսիթար Գոշ, «Առակներ», Ե., Հայկական ՍԱՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1951, էջ 93, տուակ Ղ. Բ.:

35 «Թուղթ ընդհանրական», էջ 362:

36 «Ազգաթանգելուայ Պատմութիւն», Վենետիկ, 1835, էջ 74:

37 Կ. Պապարիլոպալս, «Ճույն ժողովրդի պատմություն», Ե-րդ հրատ., Աթենք, 1932, հատ, Դ, էջ 160 (Հունարեն): Ստորագծումը մերն է—Մ. Բ.:

